ՀՏԴ 347.77.023 *Իրավագիտություն*

ԳՅՈՒՏԱՐԱՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՏԻ ՀԱՏԿԱՆԻՇ

Ս.Ֆարմանյան

Պետությունը ճանաչում և պաշտպանում է այն գյուտերը, որոնք էական ներդրում ունեն գիտության և տեխնոլոգիայի առաջընթացի մեջ: Ոչ բոլոր նորարական լուծումներն են, որ կարող են ներդրում ունենալ գիտության և տեխնոլոգիայի զարգացման մեջ:

Այլ կերպ՝ գիտության և տեխնոլոգիայի առաջընթացը գյուտի հատկանիշներից ապահովում է գյուտարարական մակարդակը, իսկ հետո նաև նորույթը: Այս երկու հատկանիշներն իրարից տարբերվող երևույթներ են, սակայն գործնականում միմյանց փոխլրացնում և կլանում են: Ասվածը, որպեսզի ավելի պարզ լինի, նշենք հիմնարար սկզբունքը, որը գոյություն ունի նրանց միջև. «Եթե գյուտը նոր չէ, ապա այն բխում է տեխնիկայի մակարդակից և ակնհայտ է. այսինքն՝ չունի գյուտարարական մակարդակ»[1]:

Օրենսդիրը, գյուտարարական մակարդակ ասելով, հասկանում է այն իրավիճակը, երբ տվյալ բնագավառի մասնագետի համար գյուտն ակնհայտորեն չի բխում տեխնիկայի մակարդակից («Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 13, առաջին մաս): Գյուտարարական մակարդակի էության վերաբերյալ նման տրամաբանություն է դրված նաև PCT 33 հոդվածում:

Այսպիսով, տեխնիկայի մակարդակը բացի նորույթից ելակետային տվյալ է նաև գյուտարարական մակարդակի համար, որը ենթադրում է գյուտի նորույթի և գյուտարարական մակարդակի նմանությունը: Նորույթի բացահայտման ժամանակ տեխնիկայի մակարդակի ուսումնասիրությունը կատարվում է այն նկատառումից ելնելով, որ պետք է գտնել հայտարկվող գյուտի հատկանիշներին նույնական հատկանիշներ:

Գյուտարարական մակարդակը բացահայտելիս տեխնիկայի մակարդակն ուսումնասիրվում է տեխնիկական լուծումների միաժամանակյա և առանձին-առանձին փնտրման միջոցով, որոնք իրենց հատկանիշներով մոտ կամ նման են հայտարկվող գյուտին: Այլ կերպ՝ գյուտարարական մակարդակին բնորոշ է այն հատկանիշը, որ տեխնիկայի մակարդակին պետք է հայտնի չլինի և չպետք է բխի տեխնիկայի մակարդակից հայտարկվող գյուտի բնորոշ հատկանիշները: Գյուտարարական մակարդակի էության բացահայտման համար կարևոր է «տվյալ բնագավառի մասնագետ» և «տեխնիկայի մակարդակից ակնհայտորեն չբխել» եզրույթների բացահայտումը: Հայտարկվող գյուտի գյուտարարական մակարդակը բացահայտելու համար որպես կանոն բացահայտվում են հետևյալ հարցադրումները.

---

[1] *Տե՛ս* ***М. В. Пантелеев****. Роль Специалиста в патентной экспертизе. Патентный поверенный. № 2, март-апрель, 2009, с. 25.*

ա/ գյուտի որ հատկանիշն է դրսևորում դրա գյուտարարական մակարդակը. գյուտարարական մակարդակը բացահայտող գյուտի հատկանիշը որոշվում է հայտի բովանդակությունից: Հիմք է ընդունվում գյուտի հավակնությունը՝ ի դեմս դրա անկախ կետի, որից էլ հենց բխում է գյուտարարական մակարդակը: Այլ կերպ՝ գյուտարարական մակարդակի բացահայտման կապակցությամբ վեր են հանվում գյուտի տեխնիկական բնութագրիչները, որոնք էլ ապահովում են գյուտարարական մակարդակը[1]:

բ/ Մինչև տվյալ գյուտի առաջնության թվականը տեխնիկայի տվյալ բնագավառի մասնագետի մասնագիտական (ոչ երևակայական) տեսանկյունից ինչպիսին է եղել տեխնիկայի մակարդակը հայտարկվող գյուտի կապակցությամբ, քննարկվող հարցի պարզաբանումն իրականացվում է նաև արտոնագրային որոնման միջոցով: Այլ կերպ՝ նշված հարցադրմանը պատասխանելու արդյունքում հանվում է տեխնիկայի մակարդակի փաստացի վիճակը գյուտի առաջնության թվականի դրությամբ

գ/ բ կետում նշված հարցադրման պատասխանից հետո դրա լույսի ներքո բացահայտել, թե ինչպիսի տարբերություններ են առկա հայտարկվող գյուտի և հայտնաբերված տեխնիկական լուծումների միջև:

դ/ հայտնաբերված տարբերություններին հասնելն արդյոք ակնհայտ է եղել տվյալ բնագավառի մասնագետի համար:

Գյուտարարական մակարդակը տեխնիկական խնդրի և դրա լուծման միջև գտնվող միջակայքն է, այն քայլը, որ կատարվում է տեխնիկական խնդրից միչև դրա լուծումը[2]: Գյուտարարական մակարդակը բացահայտելիս ուսումնասիրության առարկա է դառնում խնդրի և դրա լուծման միջև առկա միջակայքը: Հաշվի է առնվում գործնական կյանքում տվյալ բնագավառի մասնագետի և նշված միջակայքի հարաբերկացության հավանականությունը վերևում նշված հարցերին պատասխանելիս:

Տվյալ բնագավառի մասնագետը համապատասխան որակավորում ունեցող՝ այսինքն տվյալ բնագավառում առնվազն միջին մասնագիտական գիտելիքներ ունեցող անձն է, ով աչքի չի ընկնում տվյալ բնագավառում գյուտարարության հատկանիշներով, սակայն լիարժեք պատկերացում ունի քննարկվող բնագավառի մասին[3]: Ասվածը չի նշանակում, որ գյուտարարական մակարդակի բացահայտումը միայն պետք է կատարվի գյուտարարությամբ չզբաղվող տվյալ բնագավառի մասնագետի կողմից: Ընդհակառակը ստեղծագործական ունակություններով օժտված անձը առավել լավ կարող է պատկերացնել, թե տեխնիկական լուծման որ

---

[1] *Տե՛ս Case Law of the Boards of Appeal of the European Patent Office. Sixth edition. Austria, 2010, էջ 188:*

[2] *Տե՛ս Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T26/81 ակտը (http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t810026ex1.html, 2012 թ. նոյեմբերի 8-ի դրությամբ):*

[3] *Տե՛ս **М. В. Пантелеев**. Роль Специалиста в патентной экспертизе. Патентный поверенный. № 2, март-апрель, 2009, с. 2:*

հատկանիշն է ստեղծագործական աշխատանքի արդունքը, որն ունի գյուտարարական մակարդակ:

Ցանկացած դեպքում հարցը պետք է դիտարկվի ստեղծագործական գործունեության միջակության վրա հիմքը դնելով: Այսինքն՝ տվյալ բնագավառի մասնագետ ասելիս պետք է մասնագետին դիտարկել նրա ստեղծագործական ունակության միջինության տեսանկյունից. տվյալ բնագավառի մասնագետը նա է, ով զուրկ է գյուտարարական ունակությունից:

Տվյալ բնագավառի մասնագետ եզրույթի ներքո հանդես են գալիս նաև որոշակի անձանց խումբ, երբ հայտարկվող գյուտն իր բարդությամբ ենթադրում է, որ դրան կարելի հասնել որոշակի խումբ մարդկանց միասնությամբ[1]. այդ պատճառով տեսության մեջ տվյալ բնագավառի մասնագետը իրավացիորեն համարվում է իրավաբանական ֆիկցիա[2]: Իսկ եթե հայտարկվող գյուտն ունի ինչպես տեխնիկական բնութագրիչներ, այնպես էլ ոչ տեխնիկական, ապա այս դեպքում տվյալ բնագավառի մասնագետի անհրաժեշտությունը կարևորվում է գյուտի տեխնիկական բնութագրիչների մասով[3]: Այսինքն՝ կարևորվում է տեխնիկական հատկանիշների վերաբերյալ գիտելիքների առկայությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարող ենք ասել, որ տվյալ բնագավառի մասնագետն այն անձն է, ով տրամաբանության շնորհիվ է խնդրի հարցադրումից հասնում դրա լուծմանը, իսկ գյուտարարի դեպքում նույն գործունեությունն իրականացվում է երևակայության միջոցով: Քննարկվող դեպքի համար դեռևս Էյնշտեյնի կողմից դիպուկ նշվել է, որ տրամաբանության շնորհիվ A կետից հասնում ենք B կետը, իսկ երևակայության շնորհիվ՝ ամենուր: Հենց այս առանձնահատկությունն էլ ընկած է տվյալ բնագավառի մասնագետի և գյուտարարի տարանջատման հիմքում:

Ինչպես նշեցինք տեխնիկայի մակարդակը պարզելուց հետո բացահայտվում է հայտարկվող գյուտի և նմանակ գյուտերի տարբերությունը՝ այս անգամ ելնելով գյուտարարական մակարդակը բնորոշող հատկանիշից: Արդյունքում բացահայտվում է՝ ինչքանով է ակնհայտ հայտարկվող գյուտի և դրան նմանակ գյուտի տարբերությունը տվյալ բնագավառի մասնագետի տեսանկյունից՝ այս անգամ ևս տվյալ բնագավառի մասնագետի առանձնահատկությունը համարելով նրա միջին ստեղծագործական ունակությունները, իսկ դիտարկման ժամանակահատվածը ընտրելով գյուտի առաջնության թվականից ոչ ուշ ընկած ժամանկաշրջանը: Այս ամենի

---

[1] Տե՛ս Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 39/93 ակտը (http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t930039ex1.html, 2012 թ. նոյեմբերի 8-ի դրությամբ):

[2] Տե՛ս http://eapo.org/rus/ea/about/comment.html, 2013 թ. հունվարի 6-ի դրությամբ:

[3] Տե՛ս Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 641/00 ակտը (http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t000641ex1.html, 2013 թ, հունվարի 8-ի դրությամբ):

արդյունքում է, որ բացահայտվում է հայտարկվող գյուտի գյուտարարական մակարդակը, ինչը հաճախ կրում է նաև սուբյեկտիվ բնույթ, քանի որ տեխնոլոգիայի անընդհատ զարգացման պայմաններում ոչ ակնհայտության վերաբերյալ տեսակետները մարդկային ընկալման տեսանկյունից ենթարկվում են փոփոխության:

Այսպիսով, որպես ընդհանուր կանոն տեխնիկական լուծումը համարվում է գյուտարարական մակարդակ ունեցող, եթե տեխնիկայի առկա մակարդակի պայմաններում տվյալ բնագավառի մասնագետը երբևէ չէր գնա խնդրի լուծման այն ուղիով, որով գնացել է հայտարկվող գյուտի հեղինակը: Այսինքն՝ տվյալ պարագայում որպես կանոն գյուտարարական մակարդակ ունեցող գյուտը տվյալ բնագավառի մասնագետի կողմից պետք է լինի անկանխատեսելի՝ նույնիսկ առաջին հայացքից անհավանական:

Բացի վերը նշված հատկանիշներից գյուտարարական մակարդակի բացահայտման համար պրակտիկայում էական նշանակություն են ունենում նաև հետևյալ լրացուցիչ բացահայտումները, որոնք ևս կարող են լրացուցիչ ազդեցություն ունենալ փորձաքննությունն իրականացնող անձի ներքին համոզմունքի վրա գյուտարարական մակարդակը բացահայտելիս[1].

- *հայտարկվող գյուտի առևտրային արժեքը,*
- *խնդրի լուծման բարդությունը և դրա վրա թափված ջանքերն ու ծախսերը,*
- *այնպիսի խնդրի լուծումը, որպիսին երկար ժամանակ առկա է եղել հասարակական կյանքում,*
- *տեխնիկայի տվյալ բնագավառում խնդրի լուծման հետ կապված կայունության ապահովումը,*
- *գյուտի նոր և անսպասելի լինելը,*
- *հայտարկվող գյուտի ընդօրինակումների առկայությունը կամ դրա հնարավորությունը շուկայում:*

Այսպիսով, արված ուսումնասիրություններից ակնհայտ է, որ գյուտարական մակարդակի բացահայտման վերաբերյալ օրենսդրության մեջ օգտագործվող հասկացություններն առաջին հայացքից միանշանակ չեն: Տեխնիկական լուծման ակնհայտության վերաբերյալ անհստակությունն առկա է ոչ միայն ՀՀ օրենսդրության, այլև մի շարք միջազգային իրավական ակտերի, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությունների մեջ:

Հնարավոր չէ օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանել բացարձակ որոշակիություն գյուտարարական մակարդակի բացահայտման համար, քանի որ դա կհանգեցնի բացարձակ կոշտության, և օրենքը չի կարող հարմարվել փոփոխվող հանգամանքներին. այն հանգամանքների մասին է խոսքը գնում, որոնք ունեն գնահատողական բնույթ կախված մարդու

[1] *Տե՛ս Graham v. John Deere, 1966 ակտը (http://cyber.law.harvard.edu/ilaw/BMP/graham_v_john_deere.html, 2012 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ):*

ընկալումների բնույթից որոշակի ժամանակահատվածում[1]. այսինքն՝ արդյոք տվյալ տեխնիկական լուծումը ակնհայտորեն բխում է տեխնիկայի մակարդակից, թե հանդիսանում է հիմնավորապես մարդու վառ երևակայության, մտքի թռիչքի արդյունք, չափազանց փոփոխական կատեգորիա է, քանի որ կապված է մարդու ընկալումների շրջանակների բացահայտման հետ, որոնք կրում են սուբյեկտիվ բնույթ:

Այդ պատճառով էլ ինչպես ներպետական օրենսդրություններով, այնպես էլ միջազգային իրավական ակտերով, գյուտարարական մակարդակը ձևակերպվել է այնպիսի հասկացությունների միջոցով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիրն է:

Изобретательский уровень как качественная особенность изобретения

С. Фарманян

Резюме

И в государственных и в международных правовых актах существуют юридические неточности об изобретательском уровне. Но устранение этих неточностей является не проблемой законодателя, а проблемой практики, в связи с чем применение международной практики может иметь важное значение для Армении.

Inventive step as a qualitative characteristic of the invention

S. Farmanyan

Summary

The progress of science and technology is provided by inventive step of the invention. Both in the state and the international legal acts there are legal inaccuracies relating to inventive step. Removing these inaccuracies is not the problem of the legislative body, they are to be solved with the practice, and therefore the application of international practices can be important for Armenia.

[1] *Տե՛ս Netherlands, The Hague District Court (Rb. te 's-Gravenhage) of 9 December 2009 – Intervet v Meria:*